# Ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման դիմումներն առցանց ներկայացնելու  համակարգից օգտվելու ուղեցույց

Հարգելի ուսանողներ, այսուհետ ԵՊՀ ուսանողի ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում ստանալու դիմումներն ընդունվելու են միայն առցանց՝ https://e-request.ysu.am հարթակի միջոցով:

Խորհուրդ է տրվում դիմումներն ուղարկելիս օգտվել համակարգչից (Android և ios հավելվածներն առայժմ փորձարկման փուլում են):

Գործընթացը սկսելուց առաջ նախ պետք է հավաստիանաք, որ Ձեզ հասանելի է Ձեր համալսարանական էլ. փոստի հասցեն (չեք մոռացել մուտքանունը և/կամ գաղտնաբառը):

Մուտք գործելով https://e-request.ysu.am հարթակ, Դուք կտեսնեք երկու կոճակներ՝ «Ուղարկել» և «Հետևել»: (Նկար 1)



«Ուղարկել» կոճակը սեղմելուց հետո Դուք կտեղափոխվեք հաջորդ էջ, որտեղ կտեսնեք «Ուսանող», «Աշխատակից» և «Քաղաքացի» կոճակները: (նկար 2)



Բնականաբար պետք է «Ուսանող» կոճակը սեղմեք, որի արդյունքում բացված էջում ձեզնից նախ կպահանջվի մուտքագրել Ձեր համալսարանական էլ. փոստի հասցեն:  (նկար 3)



Գործող էլ. փոստի հասցեի ճիշտ մուտքագրումից հետո էջի աջ հատվածում կհայտնվի «ակտիվացման ծածկագիր» մուտքագրելու պատուհան, որի ներքևում կլինի «Դիմել» կոճակը: (Նկար 4)



Սրան զուգահեռաբար Ձեր կողմից մուտքագրված էլ. փոստի հասցեին կուղարկվի ակտիվացման ծածկագիրը. պետք է մուտք գործեք Ձեր համալսարանական էլ փոստի հասցե (Նկար 5)



բացեք «E-REQUEST.YSU.AM ACTIVATION CODE» վերնագրով նամակը (նկար 6)



վերցնեք (copy) ակտիվացման ծածկագիրը (նկար 7)



ապա վերադառնաք e-request.ysu.am-ի էջ և ակտիվացման ծածկագիրը գրեք կամ տեղադրեք (paste) համապատասխան պատուհանիկում և սեղմեք «Դիմել» կոճակը: (Նկար 8)



Դրանից հետո Դուք մուտք կգործեք տվյալների ստուգման և անհրաժեշտ փաստաթղթերի ներբեռնման էջ: Սկզբում Ձեզ կներկայացվեն ԵՊՀ ուսումնական գործընթացների կառավարման համակարգից ներմուծված՝ Ձեզ վերաբերվող տվյալները. այս բաժնում Դուք պետք է ներմուծեք միայն Ձեր բջջային հեռախոսի համարը համապատասխան պատուհանիկում, ապա ընտրեք դիմումի տեսակը՝ «Փաստաթղթի տեսակ» պատուհանիկում: (Նկար 9)



Այնուհետև «Կանոնակարգի համար» պատուհանիկում Դուք պետք է ընտրեք, թե ԵՊՀ Ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի որ կետի համապատասխան եք ուզում գրել դիմումը: (նկար 10)



Համապատասխան կետն ընտրելուց հետո աջ կողմի պատուհանիկում հայտնվում է Ձեր դիմումի տեքստը, իսկ դրա ներքևում՝ դիմումին կից ներկայացվելիք փաստաթղթերի ներբեռնման համար «Կցել փաստաթղթեր» կոճակը. կցվելիք փաստաթղթերը պետք է լինեն PDF կամ jpeg ֆորմատի և չպետք է գերազանցեն 10 մեգաբայթը: (Նկար 11 և 12)




Ակտիվացման ծածկագիր
2 Հայտի ստեղծում
3 Հաստատում
Էլ.փոստ
user1@ysumail.am
Ստեղծման ամսաթիվ
13/02/2022
Փաստաթղթի տեսակ *
Զեղչի մասին
Ուսուցման ձև
Առկա
Կրթական աստիճան
Մագիստրատուրա
Ֆակուլտետ
Փիլիսոփայությ
Կուրս
1-ին կուրս
19.7 - մարտ. հերթ
Կցել Փաստաթղթերը
Անհրաժեշտ փաստաթղթեր => 1. զինվորական գրքույկ
(կցվող փաստաթղթի ֆորմատը՝ jpg կամ pdf)
անվանում
անվանում
անվանում
ԿՑԵԼ
ան նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման
ահություն իրականացնող զորամասում մարտական
ադիր զինվորական ծառայություն անցած ուսանող եմ/ կետին
եմ ինձ տրամադրել ուսման վճարի մասնակի փոխհատուցում
ում եմ համապատասխան փաստաթղթերը (պատճենները, որոնց
ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ
Առաջ

Համապատասխան փաստաթղթերը կցելուց և ներբեռնելուց հետո Դուք հնարավորություն եք ունենում վերջնական ստուգել Ձեր մասին և Ձեր կողմից մուտքագրած ամբողջ տեղեկատվությունը, ստուգել կցված և ներբեռնված փաստաթղթերը. հավաստիանալով, որ ամեն ինչ  ճիշտ է, կարող եք սեղմել «Ուղարկել հայտը» կոճակը: (Նկար 13)




Հայտն ուղարկելուց հետո Ձեր համալսարանական էլ. փոստի հասցեին կուղարկվի դիմումի հսկիչ համար, որի միջոցով Դուք կարող եք հետևել դիմումի ընթացքին: